# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 2024 թվականի N 1004-Ա

### ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/09 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ << ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, Նկատի ունենալով, որ «Ֆուտբոլային դարբնոց» ՍՊԸ-ն մասնակցել է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի մանկապարտեզների կարիքների համար կենցաղային և համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով <<ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/09>> ծածկագրով գնման ընթացակարգին, սակայն ընկերության կողմից ներկայացված հայտում մասնավորապես առաջարկվող ապրանքի նկարագիր բաժնում բացակայում են ֆիրմային անվանումը, մակնիշը, արտադրողի անվանումը և հավելված 1.3-ը, իսկ հավելված 1-ում սխալ էր գրված պատվիրատուի անվանումը, ընկերությանը տրվել է շտկման հնարավորություն, սակայն շտկված փաստաթղթերը օրենքով սահմանված ժամկետում չեն ներկայացվել՝ որոշում եմ.

1. ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/09 ծածկագրով գնման գործընթացի մասնակից «Ֆուտբոլային դարբնոց» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ստորև համապատասխան տեղեկատվությունը աղյուսակի տեսքով:

| Մասնակցի | | | | |
|---|---|---|---|---|
| Անվանում | ՀՎՀՀ | Գործունեության հասցե | Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքերը | Գնամն ընթացակարգի ծածկագիրը |
| «Ֆուտբոլային դարբնոց» ՍՊԸ-ն | 01068008 | ք. Երևան, Մոլդովական 50/4 | <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 1-ին մասի , 6-րդ կետի ա/ ենթակետ<br>**Խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը** | ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/09 |

2. Սույն որոշման մեկական օրինակ ուղարկել «Ֆուտբոլային դարբնոց» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և ՀՀ Ֆինանսների նախարարությանը:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը դնել Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Թաթուլ Դավթյանի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2024թ. հունիսի 12
ք. Մարտունի